# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՋՐԱՌԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրառատի համայնքապետարան, գյուղ Ջրառատ 1-ին փողոց շենք 2, հեռ. 098 919 523 Էլ. փոստ Jrarat.kotayq@ mta.gov.am

21.03.2017թ. N 40
Ձեր ______________

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ՝
ՊԱՐՈՆ Լ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ

*Հարգելի պարոն Պետրոսյան*

<<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասի 9-րդ կետի համաձայն ներկայացվում է Ջրառատ համայնքի ավագանու 2017թ. մարտի 16-ի թիվ 3-րդ նիստի որոշումները:

Առդիր 13 էջ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա.ԱՍԱՏՐՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՋՐԱՌԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրառատ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Ջրառատ, (098) 919523, jrarat.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 ՄԱՐՏԻ 2017թվականի N 7

### ՋՐԱՌԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 16-Ի 3-ՐԴ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի, 17-րդ հոդվածի դրույթներով՝ *Ջրառատ համայնքի ավագանին* ***որոշում է.***
Հաստատել Ջրառատ համայնքի ավագանու 2017թվականի մարտի 16-ի թիվ 3-րդ արտահերթ նիստի օրակարգը

1. Ջրառատ համայնքի ղեկավարի կամավոր լիազորությունների իրականացման կարգը սահմանելու մասին
2. Կոտայքի մարզի Ջրառատ համայնքի վարչական տարածքում 2017թվականի համար տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու մասին
3. <<Հայաստանի համայնքների միություն>> հասարակական կազմակերպությանը անդամակցելու և անդամավճար վճարելու մասին
4. Կոտայքի մարզի Ջրառատ համայնքի ավագանու 2016թվականի ապրիլի 15-ի թիվ 15-Ն, 16-Ն, 17-Ն որոշումների մեջ փոփոխություններ կատարելու մասին
5. Կոտայքի մարզի Ջրառատ համայնքի ավագանու 2016թվականի հուլիսի 15-ի թիվ 25-Ա, 26-Ա որոշումների մեջ փոփոխություններ կատարելու մասին
6. Կոտայքի մարզպետարանի կողմից 2017թվականի փետրվար ամսին իրականացված իրավական և մասնագիտական հսկողության արդյունքների քննարկման մասին

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԲԱԴԱԼՅԱՆ ԱՐԳԻՇՏԻ
2. ԶԱՔԱՐՅԱՆ ԵՂԻՇԵ
3. ՄԵԼՔՈՆՅԱՆ ԳԱՌՆԻԿ
4. ՄԿՐՏՉՅԱՆ ՆԱՐԻՆԵ
5. ՍԱՀԱԿՅԱՆ ՀԱԿՈԲ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԹՈՒՐ ԱՍԱՏՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՋՐԱՌԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրառատ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Ջրառատ, (098) 919523, jrarat.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

16 ՄԱՐՏԻ 2017թվականի N 8

## ՋՐԱՌԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԿԱՄԱՎՈՐ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի դրույթներով՝ *Ջրառատ համայնքի ավագանին* ***որոշում է.***

1. Սահմանել՝ 2017թվականի բյուջետային տարվա համար Ջրառատ համայնքի ղեկավարի կամավոր լիազորությունների իրականացման կարգը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորոգրման պահից:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԲԱԴԱԼՅԱՆ ԱՐԳԻՇՏԻ
2. ԶԱՔԱՐՅԱՆ ԵՂԻՇԵ
3. ՄԵԼՔՈՆՅԱՆ ԳԱՌՆԻԿ
4. ՄԿՐՏՉՅԱՆ ՆԱՐԻՆԵ
5. ՍԱՀԱԿՅԱՆ ՀԱԿՈԲ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԹՈՒՐ ԱՍԱՏՐՅԱՆ

Հավելված
Կոտայքի մարզի Ջրառատ համայնքի ավագանու
2017թվականի մարտի 16-ի N-8 որոշման

# 2017ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՏԱՐՎԱ ՀԱՄԱՐ ՋՐԱՌԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԿԱՄԱՎՈՐ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

1. Հաշմանդամներին, կերակրողներին կորցրած ընտանիքներին, սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների, զին. ծառայողների ընտանիքների սոցիալական պայմանների բարելավման, ինչպես նաև զին. ծառայությունից արձակվածների, պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծման նպատակով.

ա/ մինչև 50 000/հիսուն հազար/ ՀՀ դրամ գումարի տրամադրումը վերապահել համայնքի ղեկավարին:

բ/ 50 000/հիսուն հազար/ ՀՀ դրամ գումարից ավել ծախսերի դեպքում հարցը քննարկել համայնքի ավագանու նիստում:

2. Համայնքում պաշտպանության կազմակերպման, քաղաքաշինության, կոմունալ տնտեսության ,հողօգտագործման, տրանսպորտի, կրթության, մշակույթի և երիտասարդության հետ տարվող աշխատանքների, առողջապահության, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի, աշխատանքի և սոցիալական ծառայության, գյուղատնտեսության բնագավառում կամավոր լիազորություններ իրականացնել 2017թվականի բյուջեով նախատեսված ծախսերի հաշվին.

ա/ մինչև 1 000 000 /մեկ միլիոն/ ՀՀ դրամ գումարի ծախս պահանջող աշխատանքների իրականացումը վերապահել համայնքի ղեկավարին

բ/ 1 000 000 /մեկ միլիոն/ ՀՀ դրամից ավել գումարի դեքում հարցը քննարկել համայնքի ավագանու նիստում

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՋՐԱՌԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրառատ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Ջրառատ, (098) 919523, jrarat.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 ՄԱՐՏԻ 2017թվականի N 9-Ն

## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՋՐԱՌԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2017ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ և ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետի, <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածների դրույթներով՝ *Ջրառատ համայնքի ավագանին* ***որոշում է.***

1. Սահմանել Կոտայքի մարզի Ջրառատ համայնքի տարածքում ֆիզիկական և իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող ձեռնարկությունների գործունեություն ծավալելու համար ընթացիկ տարվա տեղական տուրքերի դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:

2. Ուժը կորցրած ճանաչել Կոտայքի մարզի Ջրառատ համայնքի ավագանու 2016թվականի դեկտեմբերի 15-ի <<Կոտայքի մարզի Ջրառատ համայնքի վարչական տարածքում 2017թվականի համար տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու մասին>> թիվ 38-Ն որոշումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԲԱԴԱԼՅԱՆ ԱՐԳԻՇՏԻ

2. ԶԱՔԱՐՅԱՆ ԵՂԻՇԵ

3. ՄԵԼՔՈՆՅԱՆ ԳԱՌՆԻԿ

4. ՄԿՐՏՉՅԱՆ ՆԱՐԻՆԵ

5. ՍԱՀԱԿՅԱՆ ՀԱԿՈԲ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԹՈՒՐ ԱՍԱՏՐՅԱՆ

Հավելված
ՀՀ Կոտայքի մարզի Ջրառատ համայնքի ավագանու
2017 թվականի մարտի 16-ի N 9 -Ն որոշման

ՋՐԱՌԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

| Հ/Հ | ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | ՕՐԵՆՔՈՎ ՍԱՀՄԱՆ ՎԱԾ | ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԴՐՈՒՅՔԱ ՉԱՓԸ ԴՐԱՄ |
|---|---|---|---|
| 1 | Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության /տեղադրման/ /բացառությամբ/ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի/ թույլտվության համար՝ | | |
| ա | Հիմնական շենքերի և շինությունների համար՝ | | |
| | մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական /ամառանոցային/ տների, ինչպես նաև մինչև 200 քառակոսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների համար՝ | 15 000 | 4 500 |
| բ) | սույն կետի <<ա>> ենթակետով չնախատեսված շենքերի և շինությունների համար՝ | | |
| | 200-ից մինչև 500 քառակոսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ | 30 000 | 9000 |
| . | 500-ից մինչև 1000 քառակոսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ | 50 000 | 15000 |
| | 1000 մինչև 3000 քառակոսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ | 50 000 | 15 000 |
| . | 3000-ից և ավելի քառակոսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ | 100 000 | 30 000 |
| գ/ | Ոչ հիմնական շենքերի և շինությունների համար՝ | | |
| | մինչև 20 քառակոսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ | 3000 | 900 |
| | 20 և ավելի քառակոսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ | 5000 | 1500 |
| 2. | Համայնքի վարչական տարածքում գոյություն ունեցող շենքերի և շինությունների վերակառուցման,վերականգման, ուժեղացման, արդիականացման,բարեկարգման աշխատանքների /բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի/ թույլտվության համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝ | | |
| ա) | չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների /այդ թվում՝ | 3000 | 900 |

| | | | |
|---|---|---|---|
| | ստորգետնյա/ հետնանքով օբյեկտի ընհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն ՝ | | |
| բ) | բացի շենքերի և շինությունների վերակառուցման, ուժեղացման, վերականգման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի տրամաչափային չափերն ընդլայնող այլ կառույցների /այդ թվում՝ ստորգետնյա / հետնանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, և, բացի սույն կետի <<1>>ենթակետով սահմանված դրուքաչափից, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հավելվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը՝ շենքերի և շինությունների ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով. | | |
| գ) | նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների /այդ թվում՝ ստորգետնյա/շինարարություն կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, սույն օրենքի իմաստով,այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը: | | |
| 3. | Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված քանդման թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար՝ | 5 000 | 1 500 |
| 4. | Համայնքի վարչական տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ | 200 000 | 200 000 |
| 5. | Համայնքի վարչական տարածքում գտնվող խանութներում և կրպակներում ՝ հեղուկ վառելիքի բնական կամ հեղուկացված նավթային գազերի, մանրածախ առևտրի կենտրոնում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ | 60000 | 60000 |
| 6 | Համայնքի վարչական տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի որոշակի վայրում մանրածախ առք ու վաճառք իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ | 50000 | 50000 |
| 7 | Համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ | | |
| ա) | Ոգելից և ալկահոլային խմիչքների վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ | | |
| | մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ մինչև | 10001 | 2000 |
| | 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ մինչև | 10001-13001 | 10001 |
| . | 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ մինչև | 13001-20001 | 13001 |
| . | 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական | 20001-25001 | 20001 |

| | | | |
|---|---|---|---|
| | և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ | | |
| | 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ | 25001-45001 | 25001 |
| | 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ | 45001-101000 | 45001 |
| բ) | Ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ | | |
| | մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ մինչև | 10 001 | 2000 |
| . | 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ | 10001-13001 | 10 001 |
| | 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ | 13001-20001 | 13001 |
| | 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ մինչև | 20 001-25001 | 20 001 |
| | 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ | 25001-45001 | 25 001 |
| . | 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ | 45001-100001 | 45 001 |
| 8 | Իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի համայնքի վարչական տարածքում<<Առևտրի և ծառայությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ բացօթյա առևտրի կազմակերպման թույլտվության համար յուրաքանչյուր օրվա համար մեկ քառակուսի մետրի համար՝ | 350 | 350 |
| 9 | Համայնքի վարչական տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտների, խաղատներին և բաղնիքներին (սաունաների) ժամը 24.00- ից հետո աշխատելու թույլտվության համար օրացույցային տարվա համար՝ | | |
| ա) | առևտրի օբյեկտների համար՝ | 5 000-50 000 | 25 000 |
| բ) | հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ | 25 000-100 000 | 50 000 |
| գ) | բաղնիքների /սաունաների/ համար՝ | 200000-500000 | 200 000 |
| դ) | խաղատների համար՝ | 500000-1000000 | 500 000 |
| ե) | շահումով խաղերի համար՝ | 250000-500000 | 250000 |
| զ | վիճակախաղերի համար՝ | 100000-150000 | 100000 |
| 10 | Համայնքի վարչական տարածքում, համայնքային կանոններին համապատասխան, հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝ | | |
| ա) | Հիմնական շիությունների ներսում | | |
| | մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ մինչև | 5001 | 2000 |
| | 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ | 5001-10001 | 5001 |

| | | | |
|---|---|---|---|
| | 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ | 10001-15001 | 10001 |
| | 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ | 15001-20001 | 20000 |
| | 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ | 25001-30001 | 25000 |
| գ | 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ | 30001-50001 | 40000 |
| բ) | Ոչ հիմնական շինությունների ներսում | | |
| | մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ | 1001 | 1001 |
| | 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ | 1001-2001 | 2000 |
| . | 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ | 2001 -4001 | 3000 |
| | 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ | 4001-8001 | 5000 |
| | 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ | 8001-15001 | 10000 |
| Զ. | 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ | 15001-25001 | 20000 |
| 11. | Ավագանու սահմանած կարգին ու պայմաններին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար բացառությամբ և միջպետական և հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների օտարման շերտերում և պաշտպանական գոտիներում տեղադրվող գովազդների թույլտվությունների, յուրաքանչյուր ամիս մեկ քառակուսի մետրի համար՝ | | |
| ա) | ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ | 2000 | 2000 |
| ա) | թունդ ալկոհոլային / սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս/ արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար | 3500 | 3500 |
| գ) | Սոցիալական գովազդի համար | 0 | 0 |
| դ) | այլ արտաքին գովազդի համար | 1500 | 1500 |
| ե) | Դատարկ գովազդային վահանակների համար՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 25% տոկոսի չափով | | |
| զ) | Եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխվել և տարածել է իր կազմակերպության գովազդը՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 10% -ի չափով | | |
| 12 | Հայաստանի Հանրապետության համայնքների խորհրդանիշերը (զինանշան, անվանում և այլն), որպես օրենքով գրանցված ապրանքային նշան, ապրանքների արտադրության, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման գործընթացներում օգտագործել ու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ | 100 000 | 100 000 |
| 13 | Համայնքի վարչական տարածքում մարդատար տաքսու /բացառությամբ երթուղային տաքսիների/ ծառայություն իրականացնելու թույլտվության համար օրացուցային տարում յուրաքանչյուր մեքենայի համար | 10 000 | 10 000 |

| | | | |
|---|---|---|---|
| 14 | Համայնքի վարչական տարածքում քաղաքացիական հոգեհանգստի /հրաժեշտի/ ծիսակատարության ծառայություններ իրականացնելու և /կամ/ մատուցելու թույլտվության համար օրացուցային տարվա համար՝ | 500 000 | 500 000 |
| 15 | Համայնքի վարչական տարածքում մասնավոր գերեզմանատան կազմակերպման և շահագործման թույլտվության համար օրացուցային տարվա համար՝ | | |
| ա) | 3 հա մինչև 5հա մակերես ունեցող գերեզմանատների համար | 2 500 000 | 2 500 000 |
| բ) | 5 հա մինչև 7հա մակերես ունեցող գերեզմանատների համար | 5 000 000 | 5 000 000 |
| գ) | 7 հա մինչև 10հա մակերես ունեցող գերեզմանատների համար | 7 000000 | 7 000 000 |
| դ) | 10 հա և ավել մակերես ունեցող գերեզմանատների համար | 10 000000 | 10 000 000 |

| հ/հ | ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | ԴՐՈՒՅՔԱ ՉԱՓԸ ԴՐԱՄ |
|---|---|---|
| 1. | Համայնքի տարածքում շենքերի կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար. | 10 000 |
| 2 | Ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված շինարարության թույլտվություն պահանջող, բոլոր շինարարական աշխատանքներն իրականացնելուց հետո շենքերի և շինությունների այդ թվում դրանց վերակառուցումը, վերականգնումը ուժեղացումը, արդիականացումը, ընդլայնումն ու բարեկարգումը կառուցման ավարտը, ավարտական ակտով փաստագրման ձևակերպման համար համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար: | 7 000 |
| 3 | Ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված աշխատանքներն ավարտելուց հետո շահագործման թույլտվության ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար: | 7 000 |
| 4 | Համայնքի տնօրինության և օգտագործման ներքո գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքում փաստաթղթերի (փաթեթի) նախապատրաստման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար. | 5 000 |
| 5 | Համայնքի կողմից կազմակերպվող մրցույթների և աճուրդների մասնակցության համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար. | 5 000 |
| 6 | տեղական ինքնակառավարման մարմնի կողմից աղբահանությունը կազմակերպելու համար՝ աղբահանության վճար | 0 |
| 7 | Ֆիզիկական անձանց համար աղբահանության վճարը սահմանել | 0 |
| | 1)Արտադրական և առևտրային կազմակերպությունների աղբահանության վճարի չափը սահմանել ամսեկան մեկ խորանարդ մետրի համար | 0 |
| | 2)Պետական ոչ առևտրային կազմակերպությունների համար աղբահանության վճարի չափը սահմանել ամսեկան մեկ խորանարդ մետրի համար | 0 |
| | 3)շինարարական և խոշոր եզրաչափի աղբի հավաքման և փոխադրման համար տեղական ինքնակառավարման մարմինների կողմից տրամադրվող թույլտվության վճար՝ ըստ զանգվածի մեկ տոննա աղբի համար | 5000 |
| 8. | Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ տրամադրելու համար՝ մեկ փաստաթղթի համար փոխհատուցման վճար: | 3000 |

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՋՐԱՌԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրառատ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Ջրառատ, (098) 919523, jrarat.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 ՄԱՐՏԻ 2017թվականի N 10

### <<ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ>> ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ԱՆԴԱՄԱԿՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի դրույթներով՝ Ջրառատ համայնքի ավագանին որոշում է.

1. Անդամակցել <<Հայաստանի համայնքների միություն>> հասարակական կազմակերպությանը և վճարել անդամության վճար:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԲԱԴԱԼՅԱՆ ԱՐԳԻՇՏԻ
2. ԶԱՔԱՐՅԱՆ ԵՂԻՇԵ
3. ՄԵԼՔՈՆՅԱՆ ԳԱՌՆԻԿ
4. ՄԿՐՏՉՅԱՆ ՆԱՐԻՆԵ
5. ՍԱՀԱԿՅԱՆ ՀԱԿՈԲ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԹՈՒՐ ԱՍԱՏՐՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՋՐԱՌԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրառատ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Ջրառատ, (098) 919523, jrarat.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 ՄԱՐՏԻ 2017թվականի N 11-Ն

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՋՐԱՌԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 15-Ի ԹԻՎ 15-Ն, 16-Ն, 17-Ն ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 5-րդ մասի, հաշվի առնելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում կատարված փոփոխությունները՝ *Ջրառատ համայնքի ավագանին որոշում է.*

1. Ջրառատ համայնքի ավագանու 2016թվականի ապրիլի 15-ի

<<Ջրառատ համայնքի ղեկավարին կից խորհրդակցական մարմինների ձևավորման և գործունեության կարգը հաստատելու մասին>> թիվ 15-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝ որոշմամբ հաստատված հավելվածի 7-րդ կետի 2-րդ ենթակետում և 8-րդ կետի 1-ին ենթակետում <<քառամյա>> բառը փոխարինել <<հնգամյա>> բառով

<<Ջրառատ համայնքում ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության կարգը հաստատելու մասին>> թիվ 16-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝ որոշմամբ հաստատված հավելվածի 12-րդ կետի 3-րդ ենթակետում <<քառամյա>> բառը փոխարինել <<հնգամյա>> բառով

<<Ջրառատ համայնքում հանրային բաց լսումների և /կամ/ քննարկումների կազմակերպման և անցկացման կարգը հաստատելու մասին>> թիվ 17-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝ որոշմամբ հաստատված հավելվածի Ձև 2-ում <<քառամյա>> բառը փոխարինել <<հնգամյա>> բառով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԲԱԴԱԼՅԱՆ ԱՐԳԻՇՏԻ
2. ԶԱՔԱՐՅԱՆ ԵՂԻՇԵ
3. ՄԵԼՔՈՆՅԱՆ ԳԱՌՆԻԿ
4. ՄԿՐՏՉՅԱՆ ՆԱՐԻՆԵ
5. ՍԱՀԱԿՅԱՆ ՀԱԿՈԲ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԹՈՒՐ ԱՍԱՏՐՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՋՐԱՌԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրառատ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Ջրառատ, (098) 919523, jrarat.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 ՄԱՐՏԻ 2017թվականի N 12-Ա

### ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՋՐԱՌԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 15-Ի ԹԻՎ 25-Ա, 26-Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 5-րդ մասի, հաշվի առնելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում կատարված փոփոխությունները՝ *Ջրառատ համայնքի ավագանին* ***որոշում է.***

1. Ջրառատ համայնքի ավագանու 2016թվականի հուլիսի 15-ի

<<Ջրառատ համայնքի ղեկավարին կից խորհրդակցական մարմիններում համայնքի ավագանու անդամների թեկնածուներ առաջադրելու մասին>> թիվ 25-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝ որոշման 1-ին կետում <<քառամյա>> բառը փոխարինել <<հնգամյա>> բառով

<<Ջրառատ համայնքի ղեկավարին կից խորհրդակցական մարմինների անդամներին հաստատելու մասին>> թիվ 26-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝ որոշման 1-ին կետում <<քառամյա>> բառը փոխարինել <<հնգամյա>> բառով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԲԱԴԱԼՅԱՆ ԱՐԳԻՇՏԻ

2. ԶԱՔԱՐՅԱՆ ԵՂԻՇԵ

3. ՄԵԼՔՈՆՅԱՆ ԳԱՌՆԻԿ

4. ՄԿՐՏՉՅԱՆ ՆԱՐԻՆԵ

5. ՍԱՀԱԿՅԱՆ ՀԱԿՈԲ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԹՈՒՐ ԱՍԱՏՐՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՋՐԱՌԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրառատ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Ջրառատ, (098) 919523, jrarat.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

16 ՄԱՐՏԻ 2017թվականի N 13

### ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ 2017ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐ ԱՄՍԻՆ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 37-րդ կետի դրույթներով՝ *Ջրառատ համայնքի ավագանին* ***որոշում է.***

1. 2017թվականի փետրվարի 22-24-ը Կոտայքի մարզպետարանի կողմից Ջրառատի համայնքապետարանի աշխատակազմում անցկացված իրավական և մասնագիտական հսկողության արդյունքներն ընդունել ի գիտություն:

2. Հանձնարարել Ջրառատի համայնքապետարանի աշխատակազմին սեղմ ժամկետում վերացնել արձանագրված թերությունները:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԲԱԴԱԼՅԱՆ ԱՐԳԻՇՏԻ
2. ԶԱՔԱՐՅԱՆ ԵՂԻՇԵ
3. ՄԵԼՔՈՆՅԱՆ ԳԱՌՆԻԿ
4. ՄԿՐՏՉՅԱՆ ՆԱՐԻՆԵ
5. ՍԱՀԱԿՅԱՆ ՀԱԿՈԲ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԹՈՒՐ ԱՍԱՏՐՅԱՆ